ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Ավետիք Էլոյանի՝ 2018 թվականի նոյեմբերի 27-ից 28-ը Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում կայացած ԱՊՀ անդամ-պետությունների շինարարության ոլորտում համագործակցության միջկառավարական խորհրդի հերթական 38-րդ նստաշրջանին մասնակցելու նպատակով գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝ Ավետիք Էլոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ

3.Գործուղման վայրը և ժամկետը՝ Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2018 թվականի նոյեմբեր 27-ից 28-ը

4.Հրավիրող կողմը՝

ԱՊՀ անդամ-պետությունների շինարարության ոլորտում համագործակցության միջկառավարական խորհուրդ և Ռուսաստանի Դաշնության շինարարության և բնակարանային կոմունալ տնտեսության նախարարություն:

5.Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Նստաշրջանում ամփոփվեց կառույցի 2016-2018 թթ. աշխատանքները: Օրակարգում ներառված հիմնական հարցերից են եղել՝ ԱՊՀ երկրների ոլորտային կառույցների համագործակցությունը շինարարության նորմատիվ բազայի զարգացման, սեյսմակայուն շինարարության նորմատիվ փաստաթղթերի ներդաշնակեցման, և գնագոյացման նոր մեթոդաբանության մշակման թեմաները:

6. Քննարկված թեմաները՝

Խորհրդի նստաշրջանն անցկացվել է «Քաղաքների և բնակավայրերի կայուն զարգացում» Միջազգային տեխնիկական կոմիտեի և «Խելացի քաղաքներ կայուն զարգացման համար» Համառուսական համաժողովի աշխատանքների շրջանակներում:

7.Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր՝

Խորհրդի նստաշրջանին հանդես եմ եկել զեկույցով, ներկայացնելով «Ճարտարապետական գործունեության մասին» ՀՀ օրենքը:

Իմ կողմից նշվել է նաև, որ թեև Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգվում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով և մի շարք իրավական ակտերով, այնուամենայնիվ, ճարտարապետական գործունեության հետ կապված որոշ հարցեր հստակեցնելու կարիք են ունեցել: Օրենքի ընդունմանը նախորդել է ճարտարապետական գործունեության ընթացքում ծագած խնդիրների, ինչպես նաև միջազգային փորձի խորը վերլուծությունը,օրենքի ընդունման հետ կապված կարևոր իրավաբանական և սոցիալ-տնտեսական գործոնները՝ Հայաստանում ճարտարապետի կարգավիճակի սահմանումը, ճարտարապետական գործունեության միջավայրում առողջ մրցակցության ստեղծումը:

Նստաշրջանին ընդունված մի շարք որոշումների թվում՝ ԱՊՀ երկրների քաղաքաշինության ոլորտի գերատեսչություններին հանձնարարվել է ուսումնասիրել հայաստանյան փորձը՝ ուղղված ճարտարապետական գործունեության դաշտը կարգավորելուն:

Հանդիպումներ են տեղի ունեցել Ռուսաստանի Դաշնության շինարարության և բնակարանային կոմունալ տնտեսության նախարար՝ Վլադիմիր Յակուշևի, Բելառուսի Հանրապետության ճարտարապետության և շինարարության նախարար՝ Դմիտրի Միկուլենկոյի, Ղազախստանի Հանրապետության քաղաքաշինության և բնակարանաշինության կոմիտեի նախագահ՝ Մարհաբաթ Ժայեմբետովի, ԱՊՀ անդամ-պետությունների շինարարության ոլորտում համագործակցության միջկառավարական խորհրդի գլխավոր քարտուղար Ալեքսանդր Մյասնիկովի և այլոց հետ:

10. Գործուղվող - Ավետիք Էլոյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը – ***30.11.2018 թվական***